

Դեպ ի հոն՝ ուր մեր Աղբիւրն ծոփն եղտիւրներ կը կազմէ
 կոմակկեայ շրջակայքը ճախճախուտ ծոցերով.
 Եւ հոն ինքնիրեն կը փակուի այն ճախնային
 Բանտին մէջ՝ ուսկից ալ չէ կարող ետ դառնալու,
 Չի այն փակարանն ըսքանչելի արուեստով՝
 Մըսնելու համար միշտ բաց կ'ըլլայ, բայց դուրս գալու՝ զոց.

47. Այսպէս ալ նաեւ Տանկերդի նոյն ժամանակ,
 Ինչ կերպով ալ որ ըլլար տարօրինակ այն բանտին
 կազմութեան և արուեստի հնարքն՝ ինքիրեն ներս մըտաւ,
 Եւ քնաց հոն՝ ուսկից հնար չէ մարդ մը դուրս գայ անձամբ:
 Կարշնեղ իւր ձեռքերով ցընցեց դուռն ինչպէս պէտք էր,
 Այլ զուր տեղ իրեն ճիգն ու ջանք թափեց բանալու.
 Լըսեց ձայն մ'ալ՝ որ դըրսէն կը գոչէր. Զուր վայրկայարար,
 Ո՛վ գերիդ Արմիդայի, կ'աշխատիս դուրս ելլելու.

48. Հոս օրերդ ու տարիներդ (ըսպանուելէ մի՛ վախեր)
 Կենդանեաց դամբարանիս մէջ տի սպառես մինչեւ վերջ:
 Զի պատասխաններ, այլ սըրտին խորը ճընշած
 Կը խեղդէ քաջամարտիկն այն հառաչներն ու տրորանք.
 Եւ մըտքէն կը մեղադրէ իւր սէրն և բախտն ու ապշութիւնն,
 Եւ այլոց իրեն դէմ գործ դրած չարաննեզ խարկանքներն.
 Եւ երբեք երբեմն մեղմ ու լուռ ձայնով կը հըծծէ՝
 Մեծ զըրկանք մը տի չըլլար՝ թէ Արեւէն զուրկ քնայի.

49. Բայց հրաշագեղ արեգական մ'ամենաքաղցրը տեսքէն,
 Եղո՛ւկ ինձ, կը մընամ ես զուրկ, և չեմ իսկ գիտեր
 Թէ կըրնամ տի բնաւ դառնալ տեղ մ'ուր դարձեալ հնար ըլլայ՝
 Սիրարծարծ նըշոյլներէ տրխարմած սիրտըս բացուի:
 Յետոյ միտքը կ'իյնայ Արգանտ, և զե՛ռ աւելի
 Կը տըրտմի, և կ'ըսէ. Շատ իսկ, ո՛հ, պարտքես պակսեցայ.
 Եւ նա զիս իրաւունք ունի ձաղել ու անարգել.
 Ո՛վ մեծ յիմարութեանս, ո՛վ մըշտընջեան ամօթոյս:

50. Այսպէս մէկ կողմէն սիրոյ և միւս կողմէն ալ պատուոյ
 Ըզկըծիչ նախանձն իւր սիրտը կու կըրծէ կեղեքէ:

ՏԱՍՍՈՅ. Ազատում Նրուսաղեմի. Երգ Ե՝

Թարգմ. Հ. Ա. ՏՐՈՒՅԱՆ

“ԱՂԲԻՒՐ,” ԵՒ “ՏԱՐԱՋ,”

Պատկերագարդ ամասպիրներու խմբագրութիւնը, 1907ին, Արիւրի քսանհինգամեայ յո-
 բելեանի առթով աշխատակցութեան կը հրաւիրէ իր բոլոր նախկին յօդուածագիրները, որոնց
 պատկերներու Ալբոմը պիտի հրատարակէ շուրջապի մէջ, խնդրելով անոնց լուսանկարները,
 հասցէները, յօդուածներու ցանկը: Յորեկանի թիւը պիտի գերազանցէ իր բոլոր նախորդները,
 և պիտի վաճառուի չէլիս գնով: ԱՂԲԻՒՐը, ՏԱՐԱՋը և ԱԼԲՈՒՐը Ռուսաստան կ'արժեն
 5 բուրլի, արտասահմանի համար 10 բուրլի:

Դիտել՝ Rédaction «TARAZ» կամ «AGBUR» — Tiflis (Caucase).